ՀՊՏՀ ռեկտոր Դիանա Գալոյանի շնորհավորական ուղերձը ՀՊՏՀ շրջանավարտներին

Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, Տնտեսագիտական համալսարանի խորհրդի հարգարժա՛ն նախագահ Վահագն Խաչատուրյան,

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարգարժա՛ն նախարար Վահրամ Դումանյան,

հարգելի՛ հյուրեր, Տնտեսագիտական համալսարանի հարգելի՛ գործընկերներ և աշխատակիցներ, սիրելի՛ շրջանավարտներ, ծնողներ,

այսօր հուզառատ, միևնույն ժամանակ պատասխանատու օր է, քանի որ հավաքվել ենք՝ բարի երթ մաղթելու Հայաստանի տնտեսագիտական մայր բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին:

Մեր սիրելի՛ և անկրկնելի՛ շրջանավարտներ, վստահեցնում եմ, որ անցնող տարիներին Տնտեսագիտական համալսարանը բոլոր ջանքերը նպատակաուղղել է ձեզ որակյալ գիտելիք և հմտություններ փոխանցելուն, մեր երկրի պատասխանատու քաղաքացի դաստիարակելուն, կուռ արժեհամակարգ ձևավորելուն: Եվ ես վստահ եմ, որ դուք հաջորդ փուլ եք մտնում ոչ միայն ավելի հասուն ու բանիմաց, այլև այն բարձր գիտակցությամբ, որ կարևոր ներդրում պետք է ունենաք մեր երկրի տնտեսության զարգացման գործում:

Դուք մեր համալսարանի առաքելության կրողներն եք, մեր դեսպաններն եք ամբողջ երկրում, ինչու չէ՝ նաև արտերկրում: Բազմիցս ենք եղել ձեր հաջողությունների ականատեսը, ապրել բերկրալի պահեր, հիացել ձեր ձեռքբերումներով և առաջընթացի ոգով: Դուք ամեն օր ցույց տալիս կյանքի առաջմղման լավ օրինակներ, ոգեշնչում մեզ: Վստահ եմ, որ Տնտեսագիտական համալսարանի հեղինակությունը հարթելու է ձեր զարգացման ուղին, իսկ հետագայում համալսարանն է փառավորվելու ձեր հաջողություններով ու հեղինակությամբ:

Շնորհակալ ենք մեր նկատմամբ վստահության և մեր համալսարանի արժեքները կրելու համար, մաղթում ենք, որ հետագայում ևս չդադարեք սովորել, ինքնակրթվել, կատարելագործվել, արարել: Դա է մրցունակ լինելու միակ ճանապարհը, և ես համոզված եմ, որ Տնտեսագիտական համալսարանի լավագույն շրջանավարտների հաջողության պատմություններով դեռևս հարստանալու է մեր երկրի առաջընթացի տարեգրությունը:

Այսօր ավարտական փաստաթղթեր ենք հանձնում նաև ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի և ֆինանսատնտեսագիտական քոլեջի շրջանավարտներին: Վստահ եմ,

որ նոր ուսումնական տարում մեր քոլեջի սաների վառվռուն աչքերը կտեսնենք արդեն մեր բուհում՝ որպես մեր բուհի ուսանողներ։

Սիրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում եմ ձեզ, առողջություն, խաղաղություն և բազում հաջողություններ եմ ձեզ մաղթում։ Եղեք համառ և կհաջողեք։ Բարի՛ երթ ձեզ, սիրելի շրջանավարտներ։

Հարգանքով՝
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր